«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՁ ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 23.12.1998 թ-ին Գրանցման համար 254.120.04557, վկայական համար 01 Ա 044055

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 40

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 9

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 12

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 13

Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ 15

1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը 15
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը 17
3. Դրամական միջոցներ և համարժեքներ 25
4. Ընթացիկ հարկային ակտիվներ և այլ ընթացիկ ակտիվներ 25
5. Պաշարներ 25
6. Հիմնական միջոցներ 26
7. Կրեդիտորական պարտքեր 27
8. Պահուստներ 27
9. Հասույթ 27
10. Աշխատակիցների վարձատրության ծախսեր 28
11. Այլ գործառնական ծախսեր 28
12. Փոխարժեքային եկամուտ կամ ծախս 29
13. Ոչ գործառնական ծախսեր 29
14. Կապակցված կողմերի բացահայտում 29
15. Այլ բացահայտումներ, համաձայն UEFA-ի պահանջների 30
16. Ֆինանսական ռիսկեր 30
17. Շուկայական բնորոշ ռիսկ և ապահովագրություն 30
18. Անորոշություններ 31

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արարատ Ֆուտբոլային Ակումբ» ՀՁ ՓԲԸ-ի Ղեկավարությանը և Բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արարատ Ֆուտբոլային Ակումբ» ՀՁ ՓԲԸ-ին (այսուհետ՝ Կազմակերպություն) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019 թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

16 ապրիլի, 2020 թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և համարժեքներ	3	1,434	27,210
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով		-	-
Այլ դեբիտորական պարտքեր		-	-
Ընթացիկ հարկային ակտիվներ	4	33,119	13,284
Պաշարներ	5	7	1,032
Այլ ընթացիկ ակտիվներ	4	419	1,216
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*34,979*	*42,742*
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	153,763	168,052
Ոչ նյութական ակտիվներ՝ ֆուտբոլիստներ		-	-
Այլ ոչ նյութական ակտիվներ		-	-
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով		-	-
Այլ ոչ ընթացիկ դեբիտորական պարտքեր		-	-
Հետեծգված հարկային ակտիվներ		-	-
Ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*153,763*	*168,052*
Ընդամենը ակտիվներ		**188,742**	**210,794**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Շարունակություն, մաս 2)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտներ և այլ վարկեր		-	-
Կրեդիտորական պարտքեր խմբին կամ կապակցված կողմերին		-	-
Կրեդիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատկացումների գծով		-	134
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	7	88	1,403
Այլ կրեդիտորական պարտքեր	7	34,927	11,572
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Ընթացիկ պահուստներ	8	3,703	3,703
Այլ կարճաժամկետ պարտավորություններ		-	-
Ընդամենը ընթացիկ արտավորություններ		*38,718*	*16,812*
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վերցված փոխառություններ		274,057	26,961
Կրեդիտորական պարտքեր խմբին կամ կապակցված կողմերին		-	-
Կրեդիտորական պարտքեր ֆուդբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		-	-
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Երկարաժամկետ պահուստներ		-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*274,057*	*26,961*
Ընդամենը պարտավորություններ		312,775	43,773
Ընդամենը զուտ ակտիվներ		(124,033)	167,021

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Շարունակություն, մաս 3)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		1,234,000	1,234,000
Չբաշխված շահույթ կամ վնաս		(1,358,033)	(1,066,979)
Պահուստներ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		**(124,033)**	**167,021**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ա. Հակոբյան
Տնօրեն

Ա. Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

16 ապրիլի, 2020 թ.

Կ. Տ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ			
Տոմսերի իրացում		-	-
Հովանավորչություն և գովազդ		-	-
Հեռարձակման իրավունքներ		-	-
Առևտրական		-	-
ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ	9	2,500	24,280
Այլ գործառնական եկամուտ		-	-
Ընդամենը հասույթ		**2,500**	**24,280**
Ծախսեր			
Ապրանքների վաճառքի ինքնարժեք		-	-
Աշխատավարձի գծով ծախսեր՝ ֆուտբոլիստներին	10	(24,804)	(35,973)
Աշխատավարձի գծով ծախսեր՝ այլ աշխատակիցներին	10	(51,396)	(26,916)
Հիմնական միջոցների մաշվածություն	6	(16,786)	(16,741)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Այլ գործառնական ծախսեր, այդ թվում՝		(196,072)	(41,836)
ֆուտբոլային ծախսեր	11	(182,861)	(37,379)
վարչական ծախսեր	11	(13,211)	(4,457)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		**(289,058)**	**(121,466)**
Գործառնական շահույթ (վնաս)		**(286,558)**	**(97,186)**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
(Շարունակություն. մաս 2)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆուտբոլիստների ձեռքբերում և օտարում			
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (ֆուտբոլիստների գրանցում)		(2,381)	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում (ֆուտբոլիստների գրանցում)		-	-
Գրանցումների օտարումից շահույթ (վնաս)		-	-
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործակալներին կամ միջնորդներին և ֆուտբոլիստների վարձակալության վճարներ)		(2,626)	(3,345)
Ֆուտբոլիստների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտներ)		1,269	192
Ընդամենը ֆուտբոլիստների ձեռքբերում և օտարում		(3,738)	(3,153)
Ոչ ընթացիկ ակտիվների օտարման արդյունք			
Հիմնական միջոցների օտարումից հասույթ		-	-
Օտարված հիմնական միջոցների ինքնարժեք			
Ոչ նյութական ակտիվների օտարումից հասույթ		-	-
Օտարված ոչ նյութական ակտիվների ինքնարժեք			
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտ (ծախս)		-	-

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
(Շարունակություն, մաս 3)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական արդյունք			
Ֆինանսական եկամուտներ		-	-
Ֆինանսական ծախսեր		-	-
Ֆինանսական եկամուտ (ծախս)		-	-
Փոխարժեքային եկամուտ (ծախս)			
Փոխարժեքային եկամուտներ		106	-
Փոխարժեքային ծախսեր		(65)	(2)
Ընդամենը փոխարժեքային եկամուտ (ծախս)	12	**41**	**(2)**

Այլ եկամուտներ (ոչ գործառնական)		-	-
Այլ ծախսեր (ոչ գործառնական)	13	(799)	(1,165)
Այլ ոչ գործառնական գործունեության արդյունք		**(799)**	**(1,165)**
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**(291,054)**	**(101,506)**
Շահութահարկ		-	-
Տարվա զուտ շահույթ (վնաս)		**(291,054)**	**(101,506)**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ա. Հակոբյան
Տնօրեն

Ա. Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

16 ապրիլի, 2020 թ.

Կ. S.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	**984,000**	**(965,473)**	**18,527**
Կանոնադիր կապիտալի համալրում	250,000	-	**250,000**
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	(101,506)	**(101,506)**
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,234,000**	**(1,066,979)**	**167,021**
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,234,000**	**(1,066,979)**	**167,021**
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	-	(291,054)	**(291,054)**
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,234,000**	**(1,358,033)**	**(124,033)**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ա. Հակոբյան
Տնօրեն

Ա. Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

16 ապրիլի, 2020 թ.

Կ. Տ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Մուտքեր տոմսերի իրացումից		-	-
UEFA-ից ստացված համերաշխության գումարներ		-	24,280
Մուտքեր հեռարձակման իրավունքներից		-	-
Մուտքեր առևտրային գործունեությունից		-	-
Մուտքեր այլ գործառնական գործունեությունից		3,775	360
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*3,775*	*24,640*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Վճարումներ ձեռքբերված ապրանքների ու ծառայությունների դիմաց		190,522	39,604
Վճարված աշխատավարձ		57,136	48,307
Վճարումներ գործակալներին ու միջնորդներին		-	-
Վճարումներ այլ գործառնական ծախսերի դիմաց		27,519	25,448
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*275,177*	*113,359*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**(271,402)**	**(88,719)**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Մուտքեր ֆուտբոլիստների գրանցման օտարումից		-	-
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից		-	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		-	-
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Վճարումներ ֆուտբոլիստների գրանցումներ ձեռք բերելու նպատակով		-	-
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց		2,431	3,048
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		*2,431*	*3,048*
Զուտ հոսք ներդրումային գործունեությունից		**(2,431)**	**(3,048)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
(Շարունակություն, մաս 2)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխկապակցված կողմերից ստացված փոխառություններ		251,150	109,513
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր ու փոխառություններ		-	-
Մուտքեր կանոնադիր կապիտալում ներդրումներից		-	250,000
Մուտքեր պարտատոմսերի թողարկումից		-	-
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		*251,150*	*359,513*
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառությունների մարում փոխկապակցված կողմերին		3,100	246,722
Վարկերի ու փոխառությունների մարում ֆինանսական կազմակերպություններին		-	-
Կանոնադիր կապիտալի նվազեցում կամ շահաբաժինների վճարում		-	-
Պարտատոմսերի մարում		-	-
Տոկոսների վճարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		*3,100*	*246,722*
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		**248,050**	**112,791**
Դրամական միջոցների փոփոխություն		**(25,783)**	**21,024**
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		7	(2)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում		**27,210**	**6,188**
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում		**1,434**	**27,210**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ա. Հակոբյան
Տնօրեն

Ա. Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

16 ապրիլի, 2020 թ.

Կ. Տ.

Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ

1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

1.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ ՀՀՄՍԽ) և Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից սահմանված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն:

Կազմակերպության հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի և Եվրոպայի Լիգայի պահանջներին համապատասխան ներկայացնելու նպատակով կատարվել են լրացուցիչ բացահայտումներ:

1.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է Կազմակերպության՝ 2019 թ-ի դեկտեմբերի 31-ի և 2018 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Կազմակերպությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- ✓ չի ճանաչել հոդվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄՍ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ✓ ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄՍ-ով,
- ✓ ՖՀՄՍ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

1.3 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Կազմակերպությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

1.4 Ղեկավարության գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ի և ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրությամբ պահանջվում է, որ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Կազմակերպության ղեկավարությունը կատարի անհրաժեշտ գնահատումներ, կանխատեսումներ և

ենթադրություններ՝ կիրառելով արժանահավատության (հաշվենկատության), էականության և համադրելիության սկզբունքները: Այդ դատողությունները կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների՝ ակտիվների ու պարտավորությունների, եկամուտների ու ծախսերի չափման ժամանակ: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումները ճանաչվում են դրանց վերանայման ժամանակաշրջանում, ինչպես նաև ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա դրանք կարող են ազդեցություն ունենալ:

1.5 Գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետությունում գործառնական արժույթը ՀՀ դրամն է, որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով: Ղեկավարության համոզմամբ՝ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձություններն ու գործարքների տնտեսական էությունը և ամենահարմարն է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:
ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

2.1 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից շահաբաժինների եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Կազմակերպության՝ վճարումներ ստանալու իրավունքը: Այն ներառված է այլ եկամուտներում:

2.2 Հասույթի ճանաչումը

Հասույթը կազմակերպության առօրյա գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է՝ բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման վաճառքի դիմաց տրանսֆերային վճարներից և առնչվող հարկերից:
Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով և ներկայացնում է շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքի կամ ծառայության մատուցման դիմաց վճառվող գումար առանց զեղչերի և համապատասխան հարկերի:

Տոմսերի իրացում կամ խաղային օրերի հասույթ

Խաղային օրերի հասույթը ճանաչվում է հաշվետու տարվա ընթացքում. յուրաքանչյուր խաղային օրվա հասույթ պետք է ճանաչվի, միայն երբ խաղային հանդիպումն արդեն իսկ կայացել է: Խաղային օրվա հասույթը, որը ստացվել է որպես կանխավճար մինչև հաշվետու տարվա ավարտը, սակայն վերաբերում է հաջորդ մրցաշրջանին (օրինակ տոմսերի սեզոնային վաճառք), պետք է ձևակերպվի որպես հետաձգված եկամուտ (հասույթ) և ճանաչվի խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց:

Հովանավորչություն և գովազդ

Հովանավորչությունն ու գովազդն ընդգրկում են ակումբի գլխավոր հովանավորին, այլ հովանավորների, մարզադաշտի եզրագծային և ցուցադրվող գովազդը, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի հովանավորչություն և գովազդային գործունեություն:

Հեռարձակման իրավունքներ

Հեռարձակման իրավունքներից հասույթն իրենից ներկայացնում է ԶԼՄ-ների հետ կնքված տնային պայմանագրերից ստացվող միջոցները: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի:

Առևտրային հասույթ

Առևտրային հասույթը բաղկացած է մանրածախ իրացումներից, սնունդի և խմիչքի վաճառքից, համագումարների կազմակերպումից (ոչ խաղային օրերին), վիճակախաղերի կազմակերպումից և այլ կեպ չդասակարգված առևտրային հասույթից:

ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ

ՈՒԵՖԱ-ի մրցանակային գումարները ՈՒԵՖԱ ակումբային մրցաշարերին մասնակցության դիմաց ստացվող միջոցներն են: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի: ՈՒԵՖԱ համերաշխության վճարները ճանաչվում են որպես եկամուտ, երբ ստացվելիք գումարը դառնում է որոշակի:

Այլ գործարքներից ստացված հասույթը ճանաչվում է հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- Կազմակերպությունը ծառայություններ կամ ապրանքներ ստացողին է փոխանցել աշխատանքների արդյունքները,
- Կազմակերպությունը չի պահպանում տիրապետման կամ կառավարման իր իրավունքը՝ ապրանքների կամ մատուցված ծառայությունների արդյունքների հետագա օգտագործման նկատմամբ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

2.3 Փոխառության ծախսեր

Փոխառության բոլոր ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում տեղի են ունեցել այդ ծախսերը:

2.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման կամ կառուցման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման, և այդ հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրվող այլ ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ըստ դասերի՝ հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի
Սպորտային և տնտեսական գույք, սարքավորումներ	-	5 տարի
Մարզահամալիր	-	20 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	10 տարի

Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ակտիվի մաշվածության դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա տվյալ ակտիվի մաշվածությունը վերանայվում է այնպես, որ ապագայում ճիշտ արտացոլի նոր ակնկալիքները:

Հիմնական միջոցի վրա կատարված ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այդ հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները՝ ներառյալ վերանորոգման ու պահպանման, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում դրանց կատարման ժամանակաշրջանում: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ վերանորոգման ծախսերը կապիտալացվում են և հիմնական միջոցների կազմում ներկայացվում են առանձին դասով: Դրանց նկատմամբ հաշվարկվում է մաշվածություն, օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում վարձակալության ժամկետը:

2.5 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հողը կամ շենքը, որը պահվում է սեփականատիրոջ մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքը առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են Կազմակերպության կողմից պահվող այլ ակտիվներից:
Կազմակերպությունն իր ամբողջ ներդրումային գույքը (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) չափում է ինքնարժեքով (սկզբնական արժեքով)՝ ներառելով գործառնության հետ կապված ծախսումները: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և գույքի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

2.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

Տրանսֆերային և ֆուտբոլիստների գրանցման ձեռքներմանն ուղղված այլ բնորոշ ծախսերը կապիտալացվում են որպես ոչ ընթացիկ ոչ նյութական ակտիվներ: Այս ծախսերը տարեկան հավասար մասնաբաժիններով ամորտիզացվում են ֆուտբոլիստի պայմանագրային ժամկետին զուգընթաց: Մանկապատանեկան թիմերից փոխադրվող խաղացողներին առնչվող ծախսերը կապիտալացման ենթակա չեն:
Եթե պայմանագրի ժամկետը վերանայվում է, չամորտիզացված գումարը, ինչպես նաև պայմանագրային ժամկետի երկարաձգման առնչությամբ ծագած նոր ծախսերը, ամորտիզացվում են համաձայն նոր պայմանագրի:
Ցանկացած տրանսֆերային վճար, որի իրականացումը պայմանավորված է մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի արդյունքից, կապիտալացվում է, երբ հավանական է, որ այդ իրադարձությունը տեղի կունենա:
Ֆուտբոլիստների գրանցումներն արժեզրկման արդյունքում դուրս են գրվում, երբ դրանց հաշվեկշռային արժեքը գերազանցում է վաճառքի կամ օգտագործման փոխհատուցվող գումարը:

2.7 Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպության հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները վերանայվում են՝ պարզելու, թե կա արդյոք որևէ հայտանիշ, որ տվյալ ակտիվները կրել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա արժեզրկվող ակտիվի (կամ կից ակտիվների խումբ) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը ավելի ցածր է հաշվեկշռային արժեքից, ապա հաշվեկշային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումար, իսկ արժեզրկումից կորուստը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նույն կերպ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պաշարները գնահատվում են՝ պաշարների յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելով: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբը) արժեզրկվել է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման ու վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը համապատասխանաբար հակադարձվում է, ապա ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված, գնահատված արժեքը (պաշարների դեպքում՝ վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները), բայց այնպես, որ ավելացված արժեքը չգերազանցի այն գումարը, որը սահմանված կլիներ, եթե ակտիվի (կից ակտիվների խմբի) արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ նախորդ տարիների համար: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

2.8 Վարձակալություններ

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական բոլոր այն դեպքերում, երբ փոխանցվում են վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր վարձակալությունները դասակարգված են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները ճանաչվում են որպես ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով (կամ եթե ավելի ցածր է, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով)՝ վարձակալության սկզբի դրությամբ: Վարձատուի նկատմամբ ունեցած համապատասխան ֆինանսական պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն: Վարձավճարները հավասարապես բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները պահվում են շահույթի կամ վնասի չափումից: Ֆինանսական վճարները ներառված են հիմնական միջոցների մեջ, որոնք մաշվում և գնահատվում են ճիշտ այնպես, ինչպես սեփական ակտիվները:

Գործառնական վարձակալության շրջանակներում վճարվելիք վարձավճարները հաշվվում են շահույթում կամ վնասում՝ վարձակալության տևողության նկատմամբ գծային հիմունքով:

2.9 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է պաշարների ձեռքբերման և արտադրման ծախսերը, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին ու գտնվելու վայր հասցնելու հետ կապված այլ ծախսերը:

Իրացման զուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման զուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

Կազմակերպությունը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման ու հնացման» պահուստ:

2.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Կազմակերպությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով (շահույթի կամ վնասի միջոցով):

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով միայն այն դեպքում, եթե Կազմակերպությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ✓ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ✓ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- ✓ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- ✓ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը, և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Կազմակերպության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություններում:

Ընդհանուր առմամբ, Կազմակերպության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

➢ <u>Դեբիտորական պարտքեր</u>

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Կազմակերպությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը (365 օրից ավել) ցուցանիշ են այն բանի, որ դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է որպես անհավանական, դուրս են գրվում:

➢ <u>Մնացորդներ դրամարկղում և բանկում</u>

Դրամական միջոցների մնացորդները ներառում են դրամարկղում կանխիկ միջոցներ, ցպահանջ ավանդներ (բանկային հաշիվների մնացորդներ) և դրամական միջոցների համարժեքներ (կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ):

Ֆինանսական պարտավորություններ

Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություններում:

➢ <u>Վարկեր և փոխառություններ</u>

Վարկերը և փոխառությունները (եթե լինեն այդպիսիք) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման

արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծասխումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

➢ <u>Կրեդիտորական պարտքեր</u>

Կրեդիտորական պարքերը պարտավորություններ են, որոնք հաշվվում են վճարման սովորական պայմաններով և չեն կրում տոկոսներ: Արտարժույթով առևտրային կրեդիտորական պարտքերը վերաձևակերպվում են տեղական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքը: Արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամուտներում կամ այլ ծախսերում:

2.11 Սեփական կապիտալ

Կազմակերպության սեփական կապիտալի տարրերն են կանոնադիր կապիտալը և կուտակված շահույթը կամ վնասը:

2.12 Հարկեր

Կազմակերպությունը իր ձեռնարկատիրական գործունեության մասով հարկվում է շահութահարկով և ավելացված արժեքի հարկով:

2.13 Արտարժույթ

Արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվել են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ԿԲ-ի միջին հաշվարկային փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	31.12.2019 թ-ի դրությամբ	31.12.2018 թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	479.70 ՀՀ դրամ	483.75 ՀՀ դրամ
1 Եվրո	537.26 ՀՀ դրամ	553.65 ՀՀ դրամ

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությում որպես այլ եկամուտ կամ ծախս:

3. Դրամական միջոցներ և համարժեքներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Կանխիկ		
ՀՀ դրամ	12	3,145
Հաշվարկային հաշիվ		
ՀՀ դրամ	1,359	24,014
Արտարժույթ	63	51
Ընդամենը	**1,434**	**27,210**

4. Ընթացիկ հարկային ակտիվներ և այլ ընթացիկ ակտիվներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված հարկեր ԱԱՀ-ի գծով	26,910	13,282
Այլ դեբիտորական պարտքեր բյուջեին	6,209	2
Ընդամենը	**33,119**	**13,284**
Տրված կանխավճարներ մատակարարներին	419	1,216
Ընդամենը	**419**	**1,216**

5. Պաշարներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Նյութեր	Ընդամենը
31 դեկտեմբերի 2018	1,032	1,032
31 դեկտեմբերի 2019	7	7

6. Հիմնական միջոցներ

ՀՀ հազ. դրամներով	Համակարգչային տեխնիկա	Մեքենասար-քավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք	Մարզադաշտ[1]	Ընդամենը
Արժեքը						
31դեկտեմբեր 2018	8,881	8,315	7,180	15,412	185,262	225,050
Ավելացումներ	2,014	216	-	267	-	2,497
Պակասեցումներ	-	-	-	-	-	-
Վերագնահատումից աճ	-	-	-	-	-	-
31 դեկտեմբեր 2019	10,895	8,531	7,180	15,679	185,262	227,547
Կուտակված մաշվածք						
31 դեկտեմբեր 2018	7,131	5,879	1,207	10,820	31,961	56,998
Տարվա հատկացումներ	663	1,146	1,129	2,023	11,825	16,786
Պակասեցումներ	-	-	-	-	-	-
Արժեզրկում	-	-	-	-	-	-
31 դեկտեմբեր 2019	7,794	7,025	2,336	12,843	43,786	73,784
Հաշվեկշռային արժեք						
31դեկտեմբեր 2018	1,750	2,436	5,973	4,592	153,301	168,052
31դեկտեմբեր 2019	3,101	1,506	4,844	2,836	141,476	153,763

[1] Մարզադաշտի վրա կատարված ծախսերը կապիտալիզացվում են:

Կազմակերպությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

7. Կրեդիտորական պարտքեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	-	1,260
Կրեդիտորական պարտքեր սոցիալական վճարների գծով	-	75
Կրեդիտորական պարտքեր դրոշմանիշային վճարների գծով	88	68
Ընդամենը	**88**	**1,403**
Այլ կրեդիտորական պարտքեր մատակարարներին	34,927	11,572
Ընդամենը	**34,927**	**11,572**

8. Պահուստներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Արձակուրդային վճարների պահուստ*	Ընդամենը
Արժեքը		
31 դեկտեմբեր 2018	**3,703**	**3,703**
Պահուստի համալրում	-	-
Պահուստի օգտագործում	-	-
31 դեկտեմբերի 2019	**3,703**	**3,703**
Ներառված ընթացիկ պարտավորություններում	3,703	3,703
Ներառված ընթացիկ ակտիվներում	-	-
Ներառված ոչ ընթացիկ պարտավորություններում	-	-
Ներառված ոչ ընթացիկ ակտիվներում	-	-
Ընդամենը	**3,703**	**3,703**

* Նախկինում Կազմակերպությունը ստեղծել է արձակուրդային վճարների պահուստ, 2019 թ-ին պահուստի չափը չի փոփոխել:

9. Հասույթ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ՈՒԵՖԱ համերաշխության և մրցանակային գումարներ		
Համերաշխության վճարներ	-	24,280
Մրցանակային գումարներ	2,500	-
Ընդամենը	**2,500**	**24,280**
Այլ գործառնական եկամուտներ		
Նվիրատվություններ ֆուտբոլային մարմինների կողմից	-	-
Ընդամենը	-	-

10. Աշխատակիցների վարձատրության ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆուտբոլիստներ		
Աշխատավարձ	18,672	26,698
Հարկային կամ սոցապ հատկացումներ	6,132	9,275
Ընդամենը	**24,804**	**35,973**
Այլ աշխատակիցներ		
Աշխատավարձ	38,464	20,157
Հարկային կամ սոցապ հատկացումներ	12,932	6,759
Ընդամենը	**51,396**	**26,916**

11. Այլ գործառնական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆուտբոլային ծախսեր		
Ուսումնամարզական հավաքներ և խաղերի կազմակերպման ծախսեր	138,552	15,926
Հիմնական միջոցների սպասարկման և վերանորոգման ծախսեր	2,273	5,254
Պահնորդական ծառայություն	720	-
Սպորտային պարագաներ	14,348	863
Վճարներ ՀՖԴ-ին	9,073	6,769
Գովազդային ծախսեր	-	993
Բուժօգնություն ֆուտբոլիստներին	6,893	2,032
Խաղերի կազմակերպման հետ կապված տուգանքներ	1,585	1,250
Ֆուտբոլային դաշտերի վարձակալություն	9,417	4,292
Ընդամենը	**182,861**	**37,379**
Վարչական ծախսեր		
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	154	150
Գործուղման ծախսեր	124	97
Վարձակալական ծախսեր	1,900	-
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,982	2,960
Աուդիտ և բանկային ծախսեր	1,159	1,152
Չփոխհատուցվող հարկեր	514	-
Այլ գործառնական ծախսեր	6,378	98
Ընդամենը	**13,211**	**4,457**

12. Փոխարժեքային եկամուտ կամ ծախս

Փոխարժեքային եկամուտը կամ ծախսը արտարժույթով արտահայտված ակտիվների վերագնահատման արդյունքն է՝ 2019 թ-ին 41 հազ. դրամ եկամուտ, 2018 թ-ին 2 հազ. դրամ վնաս:

13. Ոչ գործառնական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Երաշխիքային սպասարկման և վերանորոգման ծախսեր	339	90
Տույժ տուգանքներ	217	1,023
Այլ ծախսեր	243	52
Ընդամենը	**799**	**1,165**

14. Կապակցված կողմերի բացահայտում

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2019թ.	2018թ.
Հրաչ-Ներսես Կապրիելյանից ստացված փոխառություն [1]		
Տարեկան շրջանառությունը	240,619	138,259
Կազմակերպության պարտքը տարեվերջի դրությամբ	240,619	-
Վարդան Սիրմակեսից ստացված փոխառություն [2]		
Տարեկան շրջանառությունը	-	-
Կազմակերպության պարտքը տարեվերջի դրությամբ	2,149	2,149
«Սիրկապ Արմենիա» ՓԲԸ [3]-ից մարզահամալիրի վարձատվություն և այլ ծառայություններ		
Տարեկան շրջանառությունը	2,254	2,160
Կազմակերպության պարտքը տարեվերջի դրությամբ	12,304	10,050
«Սիրկապ Արմենիա» ՓԲԸ [3]-ից ստացված փոխառություն		
Տարեկան շրջանառությունը	6,477	790
Կազմակերպության պարտքը տարեվերջի դրությամբ	31,289	24,812
«Սիրկապ Արմենիա» ՓԲԸ Երևանի մ/ճ - շինանյութի մատակարարում		
Տարեկան շրջանառությունը	-	110
Կազմակերպության պարտքը տարեվերջի դրությամբ	110	110
«Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ [4] - շինանյութի մատակարարում և շինարարական ծառայություններ		
Տարեկան շրջանառությունը	-	-
Կազմակերպության պարտքը տարեվերջի դրությամբ	562	562

[1] Հրաչ-Ներսես Կապրիելյանը հանդիսանում է Կազմակերպության բաժնետերը՝ 73.7 % բաժնեմասով:

[2] Վարդան Սիրմակեսը հանդիսանում է Կազմակերպության բաժնետերը՝ 25.08 % բաժնեմասով:

[3] Կազմակերպության բաժնետերեր՝ Հրաչ-Ներսես Կապրիելյանը և Վարդան Սիրմակեսը հանդիսանում են «Սիրկապ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերը՝ յուրաքանչյուրը 50% բաժնեմասով:

[4] Կազմակերպության բաժնետերեր՝ Հրաչ-Ներսես Կապրիելյանը և Վարդան Սիրմաքեշը հանդիսանում են «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի բաժնետերերը՝ յուրաքանչյուրը 50% բաժնեմասով:

15. Այլ բացահայտումներ, համաձայն UEFA-ի պահանջների

Սույն բացահայտումները լրացուցիչ ներկայացվում են՝ Եվրոպայի Լիգայի պահանջներին համապատասխան:

- 2020 թ-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի տրանսֆերների գծով ժամկետանց պարտքեր, որոնք վերաբերվում են 2019 թ-ին:
- 2020 թ-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի ժամկետանց պարտքեր աշխատակիցներին, չվճարված աշխատավարձերի և այլ հատուցումների գծով, որոնք վերաբերվում են 2019 թ-ին:
- 2020 թ-ի մարտի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի ժամկետանց պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով, որոնք վերաբերվում են 2019 թ-ին:

16. Ֆինանսական ռիսկեր

ՀՀ դրամի և այլ արժույթների միջև փոխարժեքային տատանումները ուղղակի ազդեցություն ունեն Կազմակերպության գործունեության վրա: Փոխարժեքների համեմատաբար կայուն վիճակը արտացոլում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում Հայաստանի կառավարության կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունքները: Սակայն ՀՀ թույլ զարգացած տնտեսությանը այսօր էլ խոչընդոտում են տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով: Արդյունքում արտարժութային ռիսկերը հետհաշվեկշռային ժամանակահատվածում մնում են բարձր մակարդակի վրա:
Գործունեության ընթացքում Կազմակերպությունն իրականացնում է արտարժութային գործարքներ և իր վրա է կրում փոխարժեքային տատանումների ազդեցությունը: Կազմակերպությունը չի կարող վստահությամբ գնահատել այս փոփոխությունների ազդեցությունը, 31.12.2019 թ-ի դրությամբ Կազմակերպության դրամական միջոցների գերակշռող մասը՝ 95.6 % ՀՀ դրամով է (տես ծանոթագրություն 3):
Արտարժույթի նկատմամբ դրամի փոխարժեքի անորոշ դրսևորման հետևանքով ղեկավարությունը չի կարող վստահությամբ գնահատել այս փոփոխությունների ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

17. Շուկայական բնորոշ ռիսկ և ապահովագրություն

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ենթարկվում է ազատ շուկայական ռիսկի գործոնների ազդեցությանը:
Հայաստանում լիարժեքորեն չեն գործում ֆուտբոլի ֆինանսավորման մի շարք մեխանիզմներ՝ գովազդը, խաղերի տոմսերի վաճառքն ու հեռարձակումները, հեղինակային իրավունքի օգտագործումը և այլն:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում:

Կազմակերպությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից:

Քանի դեռ Կազմակերպությունը ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության վրա:

18. Անորոշություններ

Քանի դեռ վերը նշված անորոշություններում առկա են տարակուսանքներն ու ենթադրությունները, Կազմակերպության ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե դրանք ինչ չափով կարող են ազդեցություն ունենալ Կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

Կազմակերպության 2019 թ-ի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Հայաստանում ֆինանսական ճշգրտումի ազդեցությունները, եթե կլինեն այդպիսիք, որոնք կարող են անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նկատելի և արժանահավատորեն գնահատելի լինի Հայաստանում:

Ա. Հակոբյան
Տնօրեն

Ա. Գևորգյան
Գլխավոր հաշվապահ

16 ապրիլի, 2020 թ.

Կ. Տ.